կըն, քանզի զաւակ արու ոչ ունէր. և իբ-րև զարգացաւ, կասկածէր 'ի նմանէ կայս-րըն. և գրեաց գիր կնոջն՝ թէ՝ սպա՛ն զդա. և ետ ցպատանին։ Եւ նա մինչ առեալ զգիրն՝ գնայր, օթեցաւ 'ի գեօղ մի. և քա-հանայ ումն բացեալ զգիրն քերեաց՝ և փո-խանակ սպանելոյն գրեց թէ փեսայացո՛ զդա 'ի դուստրն իմ 'ի սոյն աւուր։ Եւ Կայսրուհին լուեալ հիացաւ յոյժ. բայց 'ի նոյն օրն և 'ի նոյն ժամն զուգեաց զնա ընդ դստերն իւրում. և Կայսրն իբրև լուաւ, հիացաւ, և յԱստուծոյ համարեցաւ բղ-բանն, և սիրեաց զփեսայն։ Որդ սոյն պա-տանիս յետ մահուան աներոջ իւրում ե-հաս 'ի Կայսերութիւնն, և զտեղի զամանն իւրոյ 'ի մէջ անտառին՝ շինեաց մեծահան-դէս Վանք, և պրուգեալ փարթամացոյց զնա անպատմելի փառաւորութեամբ։

Հոիգուս երրորդ՝ փեսայ Գուալտու-սին՝ սկսաւ յամի Տեառն Ռ.ԿԵ. ինքնա-կալեալ ամս ԼԶ։ Յաւուրս սորա դտաւ

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան